գանքը դէպի ծերը եւ նրա խրատները՝ այդ հասարակութեան մէջ՝ սրբագործած կանոններից մէկն էր:

Ռեսի տան դռան առջեւ մի ոչխար էին քերթում մեզ համար ընթրիք պատրաստելու: Բազմութիւնը հաւաքուած էր այնտեղ: Անկարելի էր որոշել, թէ ո՛րն էր ռեսի ընտանիքին պատկանում եւ ո՛րն էր դրացին: Ամէնքը առանց խտրութեան զանազան ծառայութիւններ էին կատարում:

Ամբողջ գիւղում արդէն տարածուել էր, որ օտար մարդիկ են եկել: Այդ նրանց համար մի մեծ նորութիւն էր, որովհետեւ օտար մարդկանց խիստ հազիւ անգամ էին տեսնում: Այդ պատճառով մէկ-մէկ գալիս էին, հեռուից ուշադրութեամբ նայում էին մեզ վրայ եւ, իրանց հետաքրքրութիւնը գոհացնելով, դարձեալ գնում էին: Ոմանք մօտենում էին եւ լուռ նստում էին մեզ մօտ: Եւ այսպէս, մեզ շրջապատողների թիւը հետզհետէ աւելանում էր: Ի՞նչ տպաւորութիւն էինք գործում մենք այդ կղզիացած, ամէն յարաբերութիւններից կտրուած գիւղացիների վրայ՝ այդ դժուար էր որոշել, միայն նրանց առաջին հարցը լինում էր՝ «հայե՞ր են», եւ երբ դրական պատասխան էին ստանում, այն ժամանակ միայն սկսում էին աւելի մտերմաբար նայել մեզ վրայ:

Արեւը մտնելուց յետոյ երեկոյեան զովը ցրտի փոխուեցաւ: Այդ ցուրտը մեզ համար միայն զգալի էր, բայց գիւղացիք նրան այնքան սովորած էին, որ ամէնքը դրսում էին ընթրիք անում, ամէնքը դրսում էին պառկում, բաց օդի մէջ, եւ առաւօտեան ցօղը զովացնում էր նրանց թեթեւ անկողինները:

Գեղեցի՛կ էր գիւղական երեկոն այդ ծովեզրեայ սարաւանդի վրայ: Խաւարի մէջ անգամ նա սքանչելի տեսարան էր ներկայացնում: Բոլոր խրճիթների ճրագները վառւում էին: Գիւղի զառիվեր դիրքի համեմատ, այդ ճրագալոյցը այնպիսի տպաւորութիւն էր գործում, կարծես թէ նրանք օդի մէջ էին վառւում եւ, աստիճանաբար դէպի վեր բարձրանալով, միախառնւում էին աստղերի հետ: Երկնքի լուսատուները չէին որոշւում գիւղական խրճիթի լուսատուներից:

Ցուրտը հետզհետէ աւելի զգալի էր դառնում: Մենք խնդրեցինք ռեսից, որ ընթրիքը ներսում տան եւ մեզ համար այնտեղ քնելու տեղ պատրաստեն: Երբ կտուրից ցած իջանք, երբ մտանք տունը, մեր առջեւ ներկայացաւ մի ստորերկրեայ ընդարձակ բնակարան, զանազան բաժանմունքներով եւ զանազան սենեակներով, որոնց դռները բացւում էին միմեանց մէջ: Դա մի գետնափոր աշխարհ էր, որի մռայլ խորշերում կարող էին բնակուել բազմաթիւ ընտանիքներ: Եւ ռեսի ընտանիքը փոքր չէր: Դրսից, երբ դեռ մենք կտուրի վրայ էինք գտնւում, ոչինչ չէր երեւում, երեւում էին միայն գմբէթաձեւ